# ԱՐՑԱԽԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԽՃԱՆԿԱՐ

## Այնտեղ՝ մեր տանը

Դեկտեմբերի 3-ին Հադրութում կայացավ բողոքի ցույց՝ ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի պարետատան առաջ։ Ցուցարարները պահանջեցին կտրուկ միջոցներ ձեռնարկել ադրբեջանական ելուզակային խմբավորումներից շրջանի հայկական գյուղերի խաղաղ բնակչության անվտանգությունը պաշտպանելու համար։ ՆԳՄ զորքերը հետևողականորեն զինաթափում են հայ բնակչությանը այն դեպքում, երբ հարևան ադրբեջանական շրջաններում, ուր իբր թե նույնպես հատուկ դրություն է մտցված, բացեիբաց վխտում են ազերիների զինված գրոհայինները։ Այդ խմբերի ավազակային հարձակման զոհը դարձան Տամձորի «Հաղթանակ» կոլտնտեսության վարչության նախագահ Ռաֆիկ Հովակիմյանը, Մեծ Թաղլարի Մարշալ Խանփերյանցի անվան կաթնապրանքային ֆերմայի անասնապահ Համբարձում Զաքարյանը և պահակ Նիկոլայ Հարությունյանը։

●

Դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ազերիների ավազակախմբերը, որ հատուկ շրջանի պարետի հաղորդումներում սովորաբար անվանվում են «անհայտ անձինք», պայթեցրել են Ստեփանակերտ մտնող ջրատարը։ Հատուկ շրջանի զինվորական իշխանությունները ջրատարի պաշտպանությունը «վստահել են» ադրբեջանցի միլիցիոներին։

Ջրատարը պարբերաբար պայթեցնում են «իր պարտքը անթերի կատարող» միլիցիոների քթի տակ, իսկ «անհայտ անձինք», որպես կանոն, մնում են անպատիժ, Եվ հասկանալի է, թե ինչու։

●

Ասկերանի շրջանի Արցախաշեն գյուղի հեմենի «Սովխոզ» կոչվող տեղամասում կառուցվում է նոր գյուղ՝ Հովսեփավան, որը նախատեսված է 200 բնակիչների համար։

Արցախաշենի տնտեսությանը պատկանող տեղամասում այդ գործը նախաձեռնեց Կարեն Ջհանգիրյանը, որը գյուղմթերքների արտադրության և վերամշակման «Զվարթնոց» կոոպերատիվի (էջմիածնի շրջանի «Արցախ» կոոպերատիվի մասնաճյուղը) ներկայացուցիչն է։

Այդ հայրենանվեր գործին աջակցում են Սոս Սարգսյանի գլխավորած կոմիտեն, Նաիրիի շրջգործկոմը (նախագահ՝ Մ. Եգորյան), «Արցախ» հայրենակցական միությունը, որոնք հումք և շինանյութեր են մատակարարում «Սոս Արմենի» Հայաստանի կոոպերատիվների միջոցով։

●

Վերջերս մի քանի նոր հարձակումներ եղան Բերդաձորի վրա։ Կան զոհեր, հրդեհի է մատնվել Ծաղկաձոր գյուղը։

Այդ նույն օրերին ադրբեջանական ավազակախմբերը հարձակվեցին Հադրութի շրջանի «Հոկտեմբեր» կոլտնտեսության ֆերմայի վրա և տարան 56 գլուխ խոշոր եղջերավոր անասուն։

Վերջին երկու տարվա մեջ միայն Հադրութի շրջանի կոլտնտեսություններից գողացել են հազարավոր գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որոնց վնասը հասնում է հարյուր հազարների։

Զգալի թվով անասուններ են գողացել Շուշվա շրջանի Բերդաձոր, Քարինտակ, Հադրութի շրջանի Տող, Առաքել, Մարտակերտի շրջանի Ջափար, Արծվաշեն, Մարտունու շրջանի Սոս, Մյուրիշեն, Ավդուռ, Ասկերանի շրջանի Կարմիր գյուղ, Շոշ գյուղերից։

Զինված ավազակախմբերի կողմից մարզի տնտեսություններից գողացել են ավելի քան 2,5 հազար խոշոր, մեծ թվով մանր եղջերավոր անասուններ։

●

Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում և Ճա[illegible]յանում տեղի ունեցան գրական-գեղարվեստական երեկոներ, որոնց մասնակցում էին բանաստեղծներ Ռոբերտ Եսայանը, Հրանտ Ալեքսանյանը, Հովիկ Մուսայելյանը և գեղանկարիչ Անուշ Մելիքսեթյանը։ Այնուհետև կազմակերպվեց Ա. Մելիքսեթյանի գեղանկարչական ցուցահանդես, որը հետաքրքրությամբ ընդունվեց հասարակության կողմից։

●

Տեղի ունեցավ «Մոսկովսկիե նովոստի» թերթի խմբագրության աշխատողների՝ գլխավոր խմբագիր Ե. Վ. Յակովլևի, տեսաբան Ա. Գ. Մինաևի, ձևավորման բաժնի խմբագիր Բ. Մ. Կաուֆմանի, Հայաստանի մի խումբ ժողովրդական պատգամավորների՝ Դ. Վարդանյանի, Ս. Զոլյանի, Ռ. Քոչարյանի, քաղխորհրդի պատգամավորների՝ Թովմասյանի, Լ. Միրզոյանի հանդիպումը ԼՂԻՄ և Ադրբեջանական ԽՍՀ հարակից շրջանների արտակարգ դրության շրջանի պարետ, գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովի և պարետատան քաղբաժնի պետ գնդապետ Գ. Ն. Բոգդուխովի հետ։ Իսկ թե ինչի մասին են խոսել, ոչ ոքի հայտնի չէ։